«ՖԱՍԹ ԲԱՆԿ» ՓԲԸ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ԱՎԱՆԴԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ (ՍՊԱՍԱՐԿՄԱՆ) ԿԱՆՈՆՆԵՐ

ՆՊԱՏԱԿԸ

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ բանկային և ավանդային հաշիվների բացման և վարման (սպասարկման) կանոնները» (այսուհետ՝ Կանոններ) սահմանում են Բանկի կողմից հաշիվների բացման և վարման ընդհանուր կանոնները, այդ ծառայություններից օգտվելու պայմանները, հաճախորդների և բանկի իրավունքներն ու պարտականությունները, փոխադարձ ստանձնած պարտավորությունների խախտման համար նախատեսված պատասխանատվության միջոցները և Բանկի ու Հաճախորդի միջև առաջացած վեճերի լուծման տարբերակները:

ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն կանոնները կիրառվում են հաճախորդի բոլոր բանկային/ավանդային հաշիվների նկատմամբ, եթե այլ բան ուղղակիորեն նախատեսված չէ կոնկրետ ծառայության պայմանագրով:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Բանկ»՝ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ.

«Ծառայություն»՝ Բանկային և/կամ Ավանդային հաշիվների բացում և սպասարկում.

«Հաճախորդ»՝ Ծառայությունից օգտվող կամ օգտվել ցանկացող ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ (այդ թվում՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն կամ այլ սուբյեկտ), որն իր նկատմամբ կիրառվող իրավունքի համաձայն կարող է ունենալ բանկային հաշիվներ և օգտվել այլ բանկային ծառայություններից.

«Բանկային կամ ավանդային հաշիվ» (այսուհետ՝ Հաշիվ)՝ Բանկի և Հաճախորդի միջև համաձայնեցված պայմաններին համապատասխան Դիմում-պայմանագրի ստորագրմամբ (կնքմամբ) Հաճախորդի համար, Բանկում բացված բանկային կամ ավանդային հաշիվ.

«Սակագներ»՝ Բանկի կողմից հաստատվող և ժամանակ առ ժամանակ վերանայվող փաստաթուղթ, որը նախատեսում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց Հաճախորդից գանձվող վճարների տեսակները, դրանց գանձման կարգն ու չափերը և տվյալ ծառայության այլ հատուկ պայմանները: Սակագները համարվում են Կանոնների անբաժանելի մասը: Ընդ որում Բանկը կարող է սահմանել ընդհանուր և անհատական սակագներ՝ առանձին Հաճախորդների և Հաճախորդների խմբերի համար: Սակագները հրապարակվում են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում և հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը.

«Դիմում-պայմանագիր կամ Պայմանագիր»՝ Բանկի կողմից մատուցվող Ծառայությունից օգտվելու նպատակով Բանկի սահմանած ձևի փաստաթուղթ, որը ստորագրվում է Բանկի և հաճախորդի միջև Բանկի տարածում և/կամ այն Թվային տիրույթում, որի միջոցով Բանկն իրականացնում է Հաճախորդի հեռահար սպասարկումը: Թվային տիրույթում Պայմանագրի ստորագրում է համարվում Հաճախորդի կողմից Ծառայության պայմաններին ու Սակագներին, կանոններին, Տեղեկատվական ամփոփագրին (այսուհետ՝ Ամփոփագիր) ծանոթանալուն և դրանց ընդունման վերաբերյալ համաձայնության տրամադրելուն ուղղված Հաճախորդի գործողությունները:

«Բանկային օր կամ Գործառնական օր»՝ ծառայությունների մատուցման իմաստով Բանկային օր են համարվում այն օրացուցային օրերը, երբ Բանկը մատուցում է բանկային ծառայություններ: Ծառայությունների մատուցման համար սահմանվում է 24/7 աշխատանքային գրաֆիկ, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմաններով կամ պայմանագրերով:

Թվային տիրույթ՝ «Ֆասթ Բանկ» WEB տիրույթի և «FastBank Mobile» հավելվածի միջոցով բանկային ծառայությունների հեռակա մատուցման համակարգ:

«Թվային տիրույթում հեռահար սպասարկում»՝ «FastBank Mobile» հավելվածում, «Ֆասթ Բանկ» WEB տիրույթում և/կամ Բանկի հետ համագործակցող կազմակերպությունների հավելվածների միջոցով Բանկում նոր ընթացիկ և ավանդային հաշվի բացում, նոր և գործող ընթացիկ և ավանդային հաշվի սպասարկում, հաշիվներով գործարքների իրականացում.

«Պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվություն»՝ «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ը հաստատելու մասին ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ սահմանված հաշվետիրոջը կամ ավանդատուին պայմանագրի գործողության ընթացքում պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվություն:

Կանոններում «*» նշանով նշված բոլոր կետերը վերաբերում են միայն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Բանկի Ծառայություններից օգտվելով, ինչպես նաև Բանկի հետ Դիմում-պայմանագիր ստորագրելով (Թվային տիրույթում համաձայնությունը տալով)՝ Հաճախորդը հայտարարում է, որ ընդունում է սույն կանոնները և Սակագները, հասկացել է դրանց իմաստը, տեղյակ է, որ դրանք պարտադիր են Հաճախորդի և Բանկի համար, կազմում են Դիմում-պայմանագրի անբաժանելի մասը և ենթակա են պարտադիր կատարման:

1.2. Կանոնները մշտապես տեղադրված են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.fastbank.am:

1.3. Եթե օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Բանկի և Հաճախորդի լրացուցիչ գրավոր համաձայնությամբ, այդ թվում՝ Դիմում-պայմանագրով, սահմանված են սույն կանոններից տարբերվող, այլ դրույթներ, ապա այդ կետերի դրույթները ճանաչվում են գերակա սույն կանոնների նկատմամբ:

1.4. Կանոնները և Սակագները սահմանվում և հաստատվում են Բանկի համապատասխան կառավարման մարմնի կողմից և կարող են միակողմանիորեն փոփոխվել վերջինիս կողմից:

1.5. Բանկն իրավունք ունի փոփոխելու ցպահանջ ավանդների և բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

1.6. Բանկը որոշակի դեպքերում, հաշվի առնելով Հաճախորդի Բանկում ունեցած բանկային հաշիվներով իրականացված (իրականացվելիք) շրջանառության ծավալը, հաշիվների մնացորդները, վարկային և/կամ ավանդային պատմությունը, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը կամ այլ գործոններ, կարող է Հաճախորդի հետ պայմանագրային հիմունքներով սահմանել Բանկի կողմից հրապարակված Սակագներից տարբերվող անհատական սակագներ:

1.7. Անհատական սակագները սահմանվում են Հաճախորդի հետ կնքվող պայմանագրային հիմունքով և/կամ ծանուցման եղանակով և ենթակա չեն հրապարակման: Ընդ որում՝ հրապարակային Սակագների համեմատ ավելի բարենպաստ անհատական սակագին սահմանվում է էլեկտրոնային փոստի հասցեին ծանուցման եղանակով, իսկ հրապարակային պայմանների/սակագների համեմատ ոչ բարենպաստ անհատական սակագները սահմանվում են պայմանագրային հիմունքով: Անհատական սակագների գործողության ժամկետը, ինչպես նաև գործարքների շրջանակը սահմանվում են Բանկի կողմից:

1.8. Բանկը միակողմանիորեն, առանց Հաճախորդին տեղեկացնելու (ծանուցելու), առանձին մեկանգամյա գործարքների համար կարող է կիրառել անհատական Սակագնի և/կամ հրապարակային Սակագների համեմատ ավելի ցածր սակագին:

1.9. Բանկը իրավասու է միակողմանիորեն վերանայել Հաճախորդի համար սահմանված անհատական սակագները:

1.10. Սույն փաստաթղթի, Ամփոփագրերի և Սակագների (այդ թվում նաև անհատական սակագների) փոփոխման դեպքում Բանկը պարտավորվում է 7 աշխատանքային օր առաջ (բացառությամբ տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխության) Բանկի և Հաճախորդի միջև կնքված համապատասխան պայմանագրով ընտրված հաղորդակցման եղանակով, վերջինիս

ծանուցել Բանկի հետ կնքված պայմանագրով մատուցվող ծառայությանը վերաբերվող Կանոնների և Սակագների փոփոխությունները: Եթե, մինչև փոփոխությունների ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, Հաճախորդը գրավոր չի տեղեկացնում Բանկին՝ Պայմանների ներքո Կողմերի միջև իրավահարաբերությունները դադարեցնելու իր ցանկության մասին, այս փոփոխությունները համարվում են ընդունված Հաճախորդի կողմից:

1.11. Պայմանագրի, Կանոնների կամ կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ Պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող Բանկի ներքին ակտերի փոփոխման դեպքում, որը հանգեցնում է տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման, Բանկը պարտավոր է Բանկի և Հաճախորդի միջև կնքված համապատասխան պայմանագրով ընտրված հաղորդակցման եղանակով տեղեկացնել Հաճախորդին նոր պայմանների վերաբերյալ՝ տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ:

1.12. Հաճախորդը համաձայն է, որ Բանկը մշակի (հավաքագրում, մուտքագրում, համակարգում պահպանում, օգտագործում և այլն) իր անձնական տվյալները, առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու և իր հայեցողությամբ Բանկի կողմից ծառայությունների մատուցման, ծառայությունների առաջարկներ ներկայացնելու, մատուցվող ծառայությունները բարելավելու, ինչպես նաև Բանկի կողմից հարցումներ իրականացնելու համար: Ընդ որում, Հաճախորդն իրավունք ունի հետ կանչելու իր համաձայնությունը՝ Բանկին ներկայացնելով տրամադրված տվյալների ուղղման, ոչնչացման և/կամ մշակման դադարեցման վերաբերյալ դիմում: Հաճախորդի ներկայացրած դիմումը Բանկի կողմից դիտարկվում և դրան ընթացք է տրվում ՀՀ օրենսդրությամբ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:

1.13. Բանկը պարտավորվում է ապահովել Հաճախորդին սպասարկելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած և ՀՀ օրենսդրության համաձայն բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիությունը: Բանկային գաղտնիք են համարվում Բանկի Հաճախորդին սպասարկելու կապակցությամբ Բանկին հայտնի դարձած Հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, Հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ Հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը Հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և Բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ: Հաճախորդի, նրա հաշիվների և դրանցով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է տրամադրվել միայն Հաճախորդին և նրա օրինական ներկայացուցիչներին, ինչպես նաև այլ անձանց՝ Հաճախորդի համաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հաշիվների և դրանցով կատարված գործարքների վերաբերյալ գաղտնիությունը երաշխավորվում է ՀՀ օրենսդրությամբ:

1.14. Բանկը պատասխանատու չէ պետական մարմինների գործողությունների կամ անհաղթահարելի ուժի, այդ թվում՝ սարքավորումների անսարքության կամ էլեկտրաէներգիայի մատակարարման չնախատեսված ընդհատումների կամ խափանման հետևանքով առաջացած Հաճախորդի վնասների, կորուստների կամ ուշացման դեպքերի համար:

1.15. Բանկը Հաճախորդներին սպասարկելիս ղեկավարվում է ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներով: Բանկը ծառայությունները մատուցում է ՀՀ օրենսդրության, Բանկի կողմից սահմանված ներքին իրավական ակտերի, Կանոնների և Սակագների պահանջներին համապատասխան:

1.16. Հաճախորդը ցանկացած ժամանակ Բանկի մասնաճյուղերում կարող է ծանոթանալ սույն կանոններին, Սակագներին և այլ հրապարակային տեղեկատվությանը, որոնք տեղադրված են նաև Բանկի պաշտոնական կայքում:

1.17. Գործարքներ կատարելու նպատակով Հաճախորդը կարող է դիմել Բանկին՝ ներկայանալով մասնաճյուղ կամ Թվային տիրույթ մուտքագրելով համապատասխան ծառայության շրջանակներում գործարքների իրականացման համար Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված և Բանկի

պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված անհրաժեշտ փաստաթղթերը/տեղեկատվությունները, որոնք հնարավորություն են ընձեռնում Բանկին պատշաճ կերպով նույնականացնել Հաճախորդին և/կամ ստուգել տվյալ գործառնությունն իրականացնելու Հաճախորդի իրավասությունը:

1.18.Հաճախորդը կարող է իր Հաշիվների տնօրինման իրավունքը փոխանցել այլ անձի պատշաճ վավերացված լիազորագրի կամ օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթի հիման վրա, Բանկի կողմից պահպանվելով իրական շահառուի/հաճախորդի և ներկայացուցչի նույնականացման օրենքով և ներքին իրավական ակտերով նախատեսված պահանջները: Լիազորված անձի միջոցով գործառնություններ կատարելիս՝ լիազորագրում հստակ պետք է արտահայտվի Հաճախորդի կամքը Հաճախորդի անունից տվյալ գործառնությունը կատարելու համար որևէ երրորդ անձին իրավունք ընձեռելու վերաբերյալ: Բանկի կողմից կատարման չեն ընդունվում Հաճախորդի կողմից հասարակ (առանց պատշաճ վավերացման) գրավոր ձևով տրամադրված լիազորագրերը, բացառությամբ, եթե դրանք տրված են Իրավաբանական անձ Հաճախորդի այն իրավասու անձի կողմից, ով, համաձայն իր կանոնադրության կամ ՀՀ օրենսդրության, օժտված է նման իրավունքով: Հաճախորդը այլ անձին տրված լիազորագիրը հետ կանչելու դեպքում, պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել Բանկին: Բանկը պատասխանատվություն չի կրում լիազորված անձի միջոցով կատարված գործողությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար, եթե լիազորված անձի կողմից համապատասխան գործողությունների իրականացման պահին Բանկը չի ստացել Հաճախորդի գրավոր ծանուցումը լիազորագիրը հետ կանչելու մասին: Հաճախորդը Բանկի առջև ամբողջ ծավալով պատասխանատվություն է կրում իր կողմից լիազորված անձանց գործողությունների համար:

1.19.Հաճախորդը պարտավորվում է իրական շահառուի փոփոխության կամ նոր շահառուի ի հայտ գալու դեպքում, հարկային ռեզիդենտության փոփոխության, ինչպես նաև նախկինում իր կողմից Բանկին տրամադրված տեղեկությունների (այդ թվում՝ Հաճախորդի լիազորված անձի մասին տրամադրված տեղեկատվության մասով)՝ անձը հաստատող փաստաթղթի, հասցեի, այդ թվում՝ էլեկտրոնային հասցեի, հեռախոսահամարի և այլ տվյալների, փոփոխության դեպքում անհապաղ տեղեկացնել այդ մասին Բանկին՝ ներկայացնելով համապատասխան տեղեկատվությունը և (կամ հավաստող) փաստաթղթերը, սակայն ոչ ուշ քան փոփոխությունը տեղի ունենալուց հետո 30 օրվա ընթացքում Սույն պարտավորության չկատարման հետևանքով առաջացած անբարենպաստ հետևանքների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

*Իրավաբանական անձ հաճախորդի դեպքում վերոնշյալից բացի Հաճախորդը պարտավորվում է Բանկին անհապաղ տեղեկացնել իրավաբանական անձի վերակազմակերպման, լուծարման գործընթացում գտնվելու, մասնակիցների, տնօրենի փոփոխման վերաբերյալ:

1.20. Հաճախորդը գիտակցում է, որ պատասխանատվություն է կրում կեղծ և սխալ տրամադրված տեղեկությունների համար՝ համաձայն գործող օրենսդրության, և իր կողմից սխալ կամ թերի տեղեկություններ տրամադրելու հետևանքով Բանկի կորուստներ կրելու դեպքում, կարող է իրենից պահանջվել վերջիններիս փոխհատուցում:

1.21.Բանկն իրավունք ունի մերժել հաճախորդին հաշվի բացման/ավանդի ներդրման ծառայություն մատուցելը (այսուհետ՝ Ծառայություն), դադարեցնել հաստատված գործարար հարաբերությունը, կամ միակողմանիորեն փակել Հաճախորդի հաշիվները՝ Բանկի կողմից հաստատված ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում, եթե՝

1) Հաճախորդը Բանկին առձեռն կամ Թվային տիրույթում չի ներկայացրել տվյալ Ծառայության մատուցման համար ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված փաստաթղթերը, այդ թվում՝ Բանկին տրամադրված նույնականացման տվյալները բավարար չեն օրենսդրությամբ (այդ թվում՝ «Օտարերկրյա հաշիվների հարկման մասին» ԱՄՆ օրենքով, Միասնական Հաշվետվողական Ստանդարտով) սահմանված նորմերի և պահանջների շրջանակում հաճախորդին նույնականացնելու համար,

2) Հաճախորդի կողմից ներկայացվել են ոչ արժանահավատ կամ թերի տեղեկություններ,

3) Հաճախորդի կողմից նշված արժույթով կամ պայմաններով Բանկը չունի նախատեսված հաշիվներ/ավանդներ,

4) Հաճախորդը չի վճարում Ծառայության մատուցման համար Սակագներով նախատեսված վճարները (եթե այդպիսիք նախատեսված են),

5) Հաճախորդի վերաբերյալ առկա են տեղեկություններ փողերի լվացման, ահաբեկչական գործունեության, ահաբեկչության ֆինանսավորման մեջ ներգրավված լինելու և/կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման ռիսկերի առկայության մասին՝ համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» մասին ՀՀ օրենքի և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերի,

6) Բանկն ունի կասկածներ, որ Հաճախորդի հեռահար նույնականացումը կամ հեռահար համակարգով սպասարկումն իրականացվում է անօրինական կերպով, այդ թվում՝ երրորդ անձանց կողմից,

7) Բանկի մոտ առկա են հիմնավոր կասկածներ Հաճախորդի կողմից անօրինական/զեղծարարական գործունեության մեջ ներգրավված լինելու վերաբերյալ և Հաճախորդը չի ներկայացրել բավարար ապացույցներ/փաստաթղթեր այդ կասկածները բացառելու համար,

8) Հաճախորդը դատարանի վճռով ճանաչվել է սնանկ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,

9) ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

10) Հաճախորդը գործունեություն է իրականացնում Բանկի համար անցանկալի կամ արգելված ոլորտներում:

1.22. Միջազգային պատժամիջոցների համապատասխանության ապահովման նպատակով՝ Բանկն իր սահմանած ներքին իրավական ակտերով և/կամ թղթակից բանկերի կամ իրավասու այլ մարմինների պահանջով կարող է սահմանափակումներ կամ արգելքներ սահմանել կամ կիրառել որոշակի երկրների ռեզիդենտների և ծառայությունների նկատմամբ, կամ եթե Բանկի հիմնավոր կարծիքով Հաճախորդն ունի անուղղակի կապ պատժամիջոցների ծրագրերում ներառված երկրների, անձանց հետ կամ իր հաշվով կատարված գործարքները միտված են շրջանցել պատժամիջոցները:

1.23. Եթե Բանկը հրաժարվում է Ծառայություն մատուցել Ծառայությունից օգտվելու գրավոր դիմում (հայտ, պահանջ) ներկայացրած Հաճախորդին, ապա այդ մասին Բանկը պարտավոր է Ծառայության մատուցումը մերժելու պարագայում՝ նման որոշում կայացնելուց հետո առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր (թղթային, էլեկտրոնային կամ Թվային տիրույթում հայտ ներկայացնելու դեպքում համապատասխան համակարգում արտացոլվող հաղորդագրության միջոցով) եղանակով տեղեկացնել Հաճախորդին՝ մանրամասն նշելով նաև մերժման պատճառները, ինչպես նաև Հաճախորդի պահանջով վերադարձնել այն փաստաթղթերի բնօրինակները (վերջիններս թղթային տարբերակով Բանկ ներկայացնելու դեպքում), որոնք Հաճախորդը Ծառայության ստացման նպատակով ներկայացրել է Բանկին:

1.24. Հաճախորդը պատասխանատվություն է կրում իր Հաշվով կատարվող գործարքների՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան լինելու, ինչպես նաև գործարք կատարելու հիմք հանդիսացող փաստաթղթերի և դրանցում կատարված փոփոխությունների արժանահավատության և ճշտության համար:

1.25. Հաճախորդը պարտավոր է իր հաշիվներում/ավանդներում առկա և մուտքագրվող դրամական միջոցները չօգտագործել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման, փողերի լվացման, ահաբեկչական գործունեության, ահաբեկչության ֆինանսավորման և/կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման մեջ: Հաճախորդը հավաստում է, որ բոլոր ֆինանսական միջոցները, որոնք կփոխանցվեն Բանկում Հաճախորդի հաշիվներին, ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

1.26. Ի կատարումն «Օտարերկրյա հաշիվների հարկման մասին» ԱՄՆ օրենքի (այսուհետ՝ FATCA) պահանջների՝ Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փակել Հաճախորդի հաշիվը, եթե վերջինիս տվյալներում Բանկի կողմից հայտնաբերվել են ԱՄՆ հարկատուի հատկանիշներ (այն է՝

ԱՄՆ քաղաքացիության, ԱՄՆ ռեզիդենտության, ԱՄՆ-ում մշտական գտնվելու թույլտվության, ԱՄՆ-ում ծննդավայրի, ԱՄՆ-ում բնակության և/կամ փոստային հասցեի, ԱՄՆ տարածքում կոնտակտային հեռախոսահամար և/կամ ֆաքսի համարի, ԱՄՆ-ում գրանցման հասցե ունեցող անձին տրամադրված լիազորագրի կամ ստորագրության իրավունքի և ԱՄՆ-ում գտնվող հաշվին մեկ անգամից ավել փոխանցման իրականացման համար տրված պարբերական վճարումների հանձնարարականի առկայություն) և Հաճախորդը հրաժարվում է Բանկին տրամադրել իր վերաբերյալ տեղեկատվությունը: Ընդ որում՝ Հաճախորդը պարտավոր է տեղեկացնել Բանկին իր տվյալներում ԱՄՆ հարկատուի ցանկացած հատկանիշ ի հայտ գալու վերաբերյալ, ինչպես նաև տրամադրել իր վերաբերյալ տեղեկատվությունը ԱՄՆ հարկային ծառայությանը/ԱՄՆ հարկային գործակալի գործառույթ իրականացնող անձին FATCA-ի պահանջների համաձայն տրամադրելու համաձայնություն, համապատասխան տվյալի փոփոխությունը տեղի ունենալուց 30 օրացույցային օրվա ընթացքում:

1.27. Ի կատարումն Միասնական Հաշվետվողական Ստանդարտի պահանջների Բանկն իրավունք ունի սահմանափակել կամ դադարեցնել նախկինում բացված հաշիվներով գործարքների իրականացումը, եթե Հաճախորդը հրաժարվում է Բանկին տրամադրել ՄՀՍ-ով սահմանված տեղեկատվությունն ու համաձայնությունը՝ Բանկի կողմից նման պահանջ ներկայացնելու պահից 10-օրյա ժամկետում:

1.28. Բանկն իրավունք ունի Հաճախորդի սպասարկման ընթացքում փաստաթղթերում կամ Հաճախորդի կողմից գործառնությունների իրականացման ընթացքում սույն կանոնների և/կամ օրենսդրության պահանջների խախտման հիմնավոր կասկածներ հայտնաբերելու դեպքում կասեցնել գործարքի կատարումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.29. Բանկն իրավունք ունի, առանց Հաճախորդի համաձայնության, երրորդ անձանց զիջել Հաճախորդի հանդեպ ունեցած իր իրավունքները, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

1.30. Սույն կանոններով և համապատասխան Ծառայության պայմանագրի ուժով Բանկը հանդես է գալիս որպես ֆիզիկական անձ Հաճախորդի հարկային գործակալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և գանձում է եկամտային հարկ՝ ստացված տոկոսագումարի (եկամտի) 10%-ի չափով և փոխանցում պետական բյուջե:

*Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հարկման կարգը, չափը և մյուս առանձնահատկությունները կարգավորվում են ՀՀ հարկային օրենսգրքով և այլ նորմատիվ իրավական ակտերով:

1.31. Բանկի կողմից Հաճախորդի Հաշիվների սպասարկումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով ստորագրված Դիմում-պայմանագրերի և/կամ Թվային տիրույթում տրամադրված հաստատումների/համաձայնեցումների հիման վրա: Բանկային հաշվի բացման/ավանդի ներդրման պայմանագրերը կնքվում են էլեկտրոնային եղանակով և ուղարկվում Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցեին (Հաճախորդի առաջին իսկ պահանջի դեպքում Բանկն անվճար տրամադրում է պայմանագրի թղթային պատճենը՝ իսկականի հետ ճիշտ է նշումով: Թվային տիրույթում բացված հաշիվների կնքման վերաբերյալ Բանկի հավաստումն ուղարկվում է Թվային տիրույթում համապատասխան հաղորդագրության միջոցով և/կամ Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցեին:

1.32. Կողմերն ընդունում են, որ էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև Թվային տիրույթում Հաճախորդին ներկայացվող փաստաթղթերը և տվյալներն ունեն կողմերի ստորագրությամբ ամրագրված թղթային բնօրինակ փաստաթղթի ուժ և նույն իրավական նշանակությունը, համարվում են պաշտոնապես փոխանցված Հաճախորդին և հիմք են հանդիսանում Հաճախորդի Հաշիվներով գործառնությունների իրականացնելու համար:

1.33. Հաշվի բացման/ավանդի ներդրման համար Հաճախորդից պահանջվող փաստաթղթերի ցանկը սահմանվում է Բանկի կողմից և հրապարակվում է Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.fastbank.am:

1.34. Բանկն իրավունք ունի պահանջել թարգմանել օտար լեզուներով ներկայացված փաստաթղթերը հայերեն լեզվով, ինչպես նաև սահմանված կարգով վավերացնել դրանք: Բանկն իրավունք ունի պատճենել և իր մոտ պահել փաստաթղթերը:

1.35. Բանկում ինքնուրույն Հաշիվ բացել/ավանդ ներդնել, սպասարկվել և տնօրինել իրենց եկամուտները կարող են տասնութ տարին լրացած ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ գործունակ քաղաքացիները: Տասնչորս տարեկան չդարձած անչափահասների փոխարեն վերոնշյալ գործարքները նրանց անունից կարող են կնքել/իրականացնել միայն ծնողները կամ խնամակալները, իսկ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների կողմից դրանց կնքումն իրականացվում է օրինական ներկայացուցիչների՝ ծնողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ[1]:

1.36. Բանկը Հաճախորդի՝ սույն Կանոններին համապատասխանելու դեպքում, վերջինիս ցանկությամբ և համար բացում և սպասարկում է՝

1.36.1. բանկային հաշիվ,

1.36.2. ժամկետային ավանդ (ավանդային հաշիվ):

1.37. Արժույթները, որոնցով կարող են բացվել Հաշիվները, և համապատասխան արժույթով բացված Հաշվով իրականացվող գործառնությունների տեսակները սահմանվում և հրապարակվում են Բանկի կողմից: Յուրաքանչյուր Հաշիվ սպասարկում է միայն մեկ արժույթ, եթե այլ բան սահմանված չէ Բանկի կողմից:

1.38. Հաճախորդի հաշիվներին առկա դրամական միջոցների նկատմամբ Բանկն ունի գրավի իրավունք (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, և/կամ եթե այլ բան սահմանված չէ այլ պայմանագրերով, կանոններով և/կամ պայմաններով), որպես Բանկի և Հաճախորդի միջև առկա և/կամ հետագայում առաջացող Հաճախորդի բոլոր պարտավորությունների կատարման ապահովում:

1.39. Հաշիվներում առկա դրամական միջոցների դիմաց տոկոսները (սահմանված լինելու դեպքում) հաշվարկվում են օրական կտրվածքով: Հաշվում առկա դրամական միջոցների վրա տոկոսները հաշվարկվում են դրամական միջոցները Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն հաճախորդին վերադարձնելու կամ հաճախորդի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար: Հաճախորդի բանկային հաշվում առկա դրամական միջոցների նկատմամբ յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկվում է սահմանված տոկոսադրույքի 1/365 հարաբերակցությամբ, իսկ նահանջ տարվա համար՝ 1/366 հարաբերակցությամբ: Տոկոսները հաշվարկվում են դրամական միջոցների չօգտագործված փաստացի մնացորդի նկատմամբ:

1.40. Ներդրված ժամկետային ավանդի տոկոսները հաշվարկվում են դրամական միջոցները Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմունքներով դուրս գրվելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացույցային օրերի համար: Ներդրված ավանդի յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկվում է սահմանված տոկոսադրույքի 1/365 հարաբերակցությամբ, իսկ նահանջ տարվա համար 1/366 հարաբերակցությամբ: Տոկոսները հաշվարկվում են ավանդի փաստացի մնացորդի նկատմամբ:

1.41. Սույն կանոնները, Սակագները, ինչպես նաև տվյալ տեսակի Հաշվի առանձնահատկությունները կարգավորող Բանկի կողմից ընդունված այլ փաստաթղթերը միասին կազմում են Բանկի և Հաճախորդի միջև կնքված Պայմանագրի/Դիմում-պայմանագրի անբաժանելի մասը:

1.42. Հաճախորդը համաձայն է, որ Բանկն իրավունք ունի ձայնագրել, լուսանկարել կամ տեսագրել Հաճախորդի և Բանկի միջև Բանկի տարածքում կամ հեռահար ցանկացած կապի միջոցի օգտագործմամբ կատարվող զրույցը և/կամ գործառնությունների ընթացքը անվտանգության և սպասարկման որակի բարելավման նկատառումներից ելնելով: Այդ ձայնագրությունը, լուսանկարը կամ տեսագրությունը պահպանվում է Բանկում և կարող է ծառայել որպես ապացույց հնարավոր տարաձայնությունների լուծման համար:

ԳԼՈՒԽ 2. ԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ

2.1. Հաճախորդի և Բանկի միջև Հաղորդակցումը /այդ թվում՝ պարտադիր ներկայացման տեղեկատվություն և քաղվածքների տրամադրումը/ իրականացվում է Բանկի և Հաճախորդի միջև

[1] Թվային տիրույթում հաշիվ կարող է բացել միայն տասնութ տարին լրացած չափահաս ֆիզիկական անձը:

կնքված համապատասխան Ծառայության պայմանագրով Հաճախորդի կողմից ընտրված եղանակով:

2.2. Հաճախորդի հետ Հաղորդակցումը /ՀՀ օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված պարտադիր ներկայացման տեղեկատվության և քաղվածքների տրամադրումը/ իրականացվում է գրավոր եղանակով՝ էլեկտրոնային կապի միջոցով, եթե Հաճախորդը չի ընտրել պարտադիր ներկայացման տեղեկատվության և/կամ քաղվածքի ստացման այլ եղանակ: Բանկն առնվազն ամսական պարբերականությամբ, Հաճախորդին տրամադրում է քաղվածք Բանկում առկա յուրաքանչյուր հաշվի վերաբերյալ՝ ուղարկելով այն Պայմանագրով վերջինիս կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին, եթե Հաճախորդը չի ընտրել քաղվածքի ստացման այլ եղանակ, որտեղ արտացոլում է հաշվետու ժամանակաշրջանում հաշվով կատարված գործառնությունները: Բանկը պարտավոր չէ Հաճախորդին հաշվի քաղվածք տրամադրել, եթե հաշվետու ժամանակաշրջանում Բանկը տվյալ հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել:

2.3. Հաշիվների/ավանդների մասով Հաճախորդը իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով (բացառությամբ Բանկի հետ համագործակցող կազմակերպությունների համակարգերով) ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել պարտադիր ներկայացման տեղեկատվությունը և/կամ քաղվածքը էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը և/կամ քաղվածքները համապատասխան պայմանագրով առաջարկվող եղանակներից մեկի միջոցով ստանալու պայմանով: Հաճախորդն իրավունք ունի տեղեկատվությունը ստանալու Բանկի տարածքում՝ առձեռն, որը չի բացառում նույն տեղեկատվությունը Հաճախորդին իր կողմից ընտրված եղանակով տրամադրելու՝ Բանկի պարտականությունը:

2.4. Քաղվածքում արտացոլված գործարքների մասով անհամաձայնությունների դեպքում Հաճախորդն իրավունք ունի դիմել Բանկ: Բանկը ՀՀ օրենսդրությամբ և ներքին իրավական ակտերով նախատեսված ժամկետներում և կարգով ուսումնասիրում և ներկայացնում է իր դիրքորոշումը:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԱՐԿԱԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

3.1. Բանկը Հաճախորդին հաշվարկադրամարկղային ծառայություն մատուցում է Սակագներին համապատասխան:

3.2. Բանկը հաշվից դրամական միջոցները դուրս է գրում Հաճախորդի Հաշվին առկա դրամական միջոցների սահմաններում: Բանկը իրավասու է մերժել Հաճախորդի հանձնարարականը այն ներկայացնելու պահին Հաճախորդի հաշվին գործարքը կատարելու և/կամ Սակագներով սահմանված գումարները գանձելու համար գումարի անբավարարության դեպքում: Հաշվից միջոցներ դուրսգրելու կարգադրությունները Բանկը կարող է ընդունել կատարման Հաճախորդի կողմից Բանկին տրված պարբերական կամ այլ վճարումների հանձնարարականների հիման վրա (այդ թվում՝ Թվային տիրույթում գործարքների կատարման հանձնարարականները):

3.3. Բանկը Հաճախորդի հաշվին մուտք եղած դրամական միջոցները մուտքագրում է ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը, եթե ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ օրենքով կամ բանկային հաշվի պայմանագրով:

3.4. Եթե Հաշվին փոխանցվել են միջոցներ, որոնք տարբերվում են Հաշվի արժույթից, ապա Բանկը Հաշվին մուտքագրում է դրան համարժեք գումար՝ տվյալ հաշվի արժույթով՝ հաշվարկված Բանկի կողմից անկանխիկ գործարքների համար տվյալ գործառնության իրականացման պահի դրությամբ գործող վաճառքի փոխարժեքով:

3.5. Հաճախորդը չի կարող հետ կանչել Բանկի կողմից կատարված վճարման հանձնարարականը, եթե այլ բան նախատեսված չէ Բանկի և Հաճախորդի գրավոր համաձայնությամբ:

3.6. Եթե Բանկի և Հաճախորդի միջև համաձայնեցված է վճարման հանձնարարականի կատարման որոշակի օր, Հաճախորդը կարող է հետ կանչել վճարման հանձնարարականը մինչև հանձնարարականի կատարման օրվան նախորդող Բանկային օրվա ավարտը:

3.7. Վճարման հանձնարարականը Հաճախորդի կողմից հետ կանչելիս՝ Բանկը չի ապահովում միջոցների վերադարձը, եթե միջնորդ Բանկից և/կամ ստացողներից հնարավոր չի լինում հետ վերադարձնել միջոցները:

3.8. Հաճախորդը, ստորագրելով համապատասխան պայմանագիրը, հանձնարարում է Բանկին և իրավունք տալիս անակցեպտ կարգով դրամական միջոցները դուրս գրել Բանկում գործող իր հաշիվներից հետևյալ դեպքերում՝

3.8.1. Հաշվին սխալմամբ (այդ թվում՝ ծրագրային սխալի պատճառով) միջոցների մուտքագրման, ինչպես նաև գերածախսի ձևավորման, դեբիտորական պարտքի առաջացման դեպքում, վարկային պարտավորությունների կատարման նպատակով,

3.8.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի հարկերի և այլ պարտադիր վճարների կատարման նպատակով և դեպքում,

3.8.3. Դատարանի վճռով, այդ թվում՝ կատարողական փաստաթղթերի հիման վրա դրամական միջոցների դուրսգրման հայտ ստանալու դեպքում,

3.8.4. Հաճախորդի կողմից Բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների չկատարման դեպքում, այդ թվում, բայց չսահմանափակվելով նաև, Բանկի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների մարմանը, եթե պարտավորության կատարման օրը Հաճախորդը կամավոր չի կատարել պարտավորությունը,

3.8.5. Բանկի Սակագներով նախատեսված վճարների գանձման դեպքում,

3.8.6. նորմատիվ իրավական ակտերով նախատեսված այլ դեպքերում:

3.9. Հաճախորդը պարտավոր է Բանկի կողմից իր հաշվին սխալմամբ մուտքագրված և օգտագործված դրամական միջոցները վերադարձնել հետ:

3.10. Հաշիվը տնօրինելու Հաճախորդի իրավունքը կարող է սահմանափակվել կամ Հաշվից միջոցները բռնագանձվել առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու՝ Հայաստանի Հանրապետության դատական և այլ իրավասու մարմինների որոշմամբ, ինչպես նաև՝ Բանկի կողմից, եթե Հաճախորդը խախտում է Բանկի առջև ստանձնած վարկային կամ այլ պարտավորությունները:

3.11. Ավանդը կարող է ժամկետից շուտ դադարեցվել/Ավանդի պայմանագրով նախատեսված գումարը նվազեցվել Բանկի հանդեպ առկա վարկային պարտավորությունների մարման դեպքում առանց դատարան դիմելու, եթե ավանդը հանդիսանում է գրավի առարկա, ինչպես նաև դատարանի վճռով, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և/կամ հարկային մարմինների կողմից ներկայացված բռնագանձման որոշման/հայտի հիման վրա: Ընդ որում՝

3.11.1. Եթե բռնագանձման գումարը փոքր է Ավանդի գումարից, ապա Ավանդը (նվազեցված բռնագանձման գումարի չափով) շարունակում է գործել Ավանդային պայմանագրով նախատեսված պայմաններով և ժամկետով: Տվյալ դեպքում Ավանդի տոկոսագումարները հաշվեգրվում են Ավանդի փաստացի մնացորդի նկատմամբ,

3.11.2. Եթե բռնագանձման գումարը հավասար է Ավանդի գումարին, ապա Ավանդային պայմանագիրը լուծվում է և հաշվեգրված տոկոսագումարները փոխանցվում են Հաճախորդի՝ նախապես ընտրված տոկոսագումարների ստացման հաշվին,

3.11.3. Եթե բռնագանձման գումարը գերազանցում է Ավանդի գումարը, ապա Ավանդային պայմանագիրը լուծվում է, իսկ հաշվեգրված տոկոսագումարները բռնագանձվում են մնացած պարտքի չափով,

3.11.4. Այն դեպքում, եթե բռնագանձման արդյունքում Ավանդի փաստացի գումարը փոքր է տվյալ ավանդատեսակի համար Բանկում սահմանված նվազագույն գումարից, ապա Ավանդային պայմանագիրը լուծվում է, իսկ հաշվեգրված տոկոսագումարները և Ավանդի գումարի մնացորդը (բռնագանձումից հետո) փոխանցվում են Հաճախորդի՝ նախապես ընտրված համապատասխանաբար տոկոսագումարների ստացման և Ավանդի գումարի վերադարձման հաշվեհամարին/ներին,

3.12. Հաճախորդն իր Հաշիվներով կատարված գործառնությունների վերաբերյալ (այդ թվում՝ բռնագանձման փաստի վերաբերյալ) տեղեկացվում է տվյալ հաշվի քաղվածքի միջոցով՝ իր կողմից

նախապես ընտրված հաղորդակցման /քաղվածքի ստացման/ եղանակով՝ առնվազն ամսական պարբերականությամբ: Քաղվածքում արտացոլված տվյալները համարվում են հաշվով կատարված գործարքների մասին պատշաճ ծանուցում:

3.13. Հաճախորդն ինքնուրույն տնօրինում է իր Հաշվում առկա դրամական միջոցները: Բանկն իրավունք չունի Հաշվում եղած դրամական միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքները սահմանափակել, բացի օրենքով, Կանոններով և համապատասխան պայմանագրերով նախատեսված դեպքերի:

3.14. Հաշվով գրավոր գործարքներն իրականացվում են Հաճախորդի կողմից կամ անունից պատշաճ կերպով լրացված Վճարման հանձնարարականների և/կամ Թվային տիրույթում տրված վճարման հրահանգների, հանձնարարականների հիման վրա: Հաշվին կանխիկ դրամական միջոցների մուտքագրումները և/կամ Հաշվից ելքագրումներն իրականացվում են մուտքային/ելքային դրամարկղային անդորրագրերի հիման վրա: Հաճախորդի կողմից նշված անդորրագրերի վրա դրված ստորագրությունը և/կամ Թվային տիրույթում տրված հրահանգները/հավաստումները հանդիսանում են հաշվով կատարված գործառնության հավաստիացում:

3.15. Միջոցները դուրս են գրվում հաճախորդի Վճարման հանձնարարականների և դուրսգրման այլ փաստաթղթերի՝ Բանկ մուտք լինելու օրացուցային հաջորդականությամբ, իսկ անբավարարության դեպքում՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

3.16. Այն դեպքում, երբ Հաճախորդի Հաշվին առկա գումարները բավարար չեն Վճարման հանձնարարականը կատարելու և դրա համար սահմանված վճարը գանձելու կամ արտարժույթի փոխանակման գործարքն իրականացնելու համար, գործարքը/հանձնարարականը չի կատարվում, ընդ որում՝ Բանկը նման դեպքերում պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կարգադրությունը չկատարելու հետևանքով հաճախորդի կրած վնասների համար:

3.17. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականի հիման վրա գործարքի կապակցությամբ լրացուցիչ տեղեկատվություն պահանջելու, ուսումնասիրելու կամ փոխանցումը կասեցնելու, գումարները սառեցնելու կամ դրանք չփոխանցելու և դրա հետևանքով առաջացած Հաճախորդի ծախսերի, կորուստների և վնասների համար:

3.18. Հաճախորդն իրավունք ունի չեղյալ համարել իր կողմից ներկայացված վճարման հանձնարարականը՝ ամբողջությամբ փոխհատուցելով այդ կապակցությամբ Բանկի կրած վնասները:

3.19. Վճարման հանձնարարականներին վերաբերող այն դրույթները, որոնք ներառված չեն Կանոններում, կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում դրամական փոխանցումների կատարման առավելագույն ժամկետների վերաբերյալ» կարգով, ինչպես նաև Բանկի կողմից հրապարակված համապատասխան ներքին իրավական ակտերով:

3.20. Հաշվի օրական մնացորդի նկատմամբ Բանկը կարող է հաշվեգրել տոկոս՝ տվյալ ժամանակահատվածի համար Բանկում գործող Սակագներով և պայմանագրով սահմանված չափով, ընդ որում՝ օրական մնացորդ է համարվում տվյալ գործառնական օրվա ավարտին Հաշվի փաստացի մնացորդը: Հաշվում առկա գումարի վրա տոկոսները հաշվարկվում են գումարը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն Հաճախորդին վերադարձնելու կամ Հաճախորդի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:

3.21. Բանկը կանխիկ վճարվող դրամական միջոցների մասով իրականացնում է թվաբանական կլորացում հետևյալ կարգով.

1) 5 (հինգ) ՀՀ դրամից մեծ կամ հավասար գումարները կլորացվում են դեպի վերև՝ մինչև առաջին տասնորդական,

2) իսկ 5 (հինգ) ՀՀ դրամից փոքր գումարները կլորացվում դեպի ներքև՝ մինչև առաջին տասնորդական,

3.22. Այն դեպքում, երբ արտարժութային գործարքի գումարը ներառում է Բանկում տվյալ պահին ընդունվող արտարժութային թղթադրամների նվազագույն արժեքից փոքր մաս, ապա գումարի տվյալ մասը Հաճախորդին տրամադրվում է ՀՀ դրամով՝ արտարժույթի փոխանակման փոխարժեք ընդունելով Բանկում գործարքի պահին գործող անկանխիկ վաճառքի փոխարժեքը:

3.23. Բանկը հաշվարկադրամարկղային վճարները Հաշվից գանձում է ծառայության մատուցման պահին տվյալ գործառնության համար նախատեսված գործող Սակագներով:

3.24. Հաշվի տարեկան սպասարկման առաջին տարվա համար նախատեսված վճարը Բանկի Սակագներով սահմանված չափով, առկայության դեպքում, Բանկի կողմից գանձվում է առաջին տարվա համար Հաշվի բացման/պայմանագրի կնքման պահին: Յուրաքանչյուր հաջորդող օրացույցային տարվա վճարը գանձվում է Հաշվից տվյալ տարվա առաջին ամսվա վերջին օրացուցային օրը:

3.25. Սակագներով սահմանված միջնորդավճարները կամ այլ ծառայության վճարները, բացառությամբ տվյալ Հաշվի պայմանագրով նախատեսված դեպքերի, առաջնահերթ անակցեպտ կարգով գանձվում են Հաճախորդի՝ ՀՀ դրամով գործարքի առարկա հանդիսացող հաշվից/ներից, վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Հաճախորդի դոլարային հաշվից/ներից, այնուհետև՝ եվրոյով, ռուբլով հաշվից/ներից, ապա Հաճախորդի այլ արտարժութային հաշվից/ներից, որոնց արդյունքում արտարժույթի՝ ՀՀ դրամի փոխարկումն իրականացվում է փոխարկման պահին Բանկում գործող անկանխիկ վաճառքի փոխարժեքով, որը հրապարակվում է Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում: Ընդ որում՝ միևնույն արժույթով հաշիվներից միջնորդավճարների գանձման նախապատվությունը տրվում է ավելի վաղ բացված հաշվին:

3.26. Բանկն իրականացնում է նաև Հաշվի արժույթից տարբերվող այլ արժույթներով կատարվող գործառնություններ: Հաշվի արժույթից տարբերվող արժույթով հաշվին դրամական միջոցների մուտքի և ելքի դեպքում փոխարկման փոխարժեքը Բանկի կողմից սահմանվում է փոխարկման գործառնության իրականացման պահի դրությամբ Բանկի արժութային փոխանակման գործառնությունների գործող փոխարժեքով՝ փոխարկումը կատարվում է.

1) արժութային հաշվից տարանցիկ հաշվին փոխանցվող գումարների փոխարկման դեպքում՝ գործառնության իրականացման պահի դրությամբ գործող Բանկի անկանխիկ արժութային փոխանակման գործառնությունների փոխարժեքով,

2) տարանցիկ հաշվից գործարքը կատարելու համար փոխարկման դեպքում՝ գործառնության իրականացման պահի դրությամբ գործող՝ Բանկի անկանխիկ արժութային փոխանակման գործառնությունների փոխարժեքով:

3.27. Բանկի կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականի գումարը Հաճախորդի Հաշվին կրեդիտագրվելու մասին Բանկը Հաճախորդին տեղեկացնում է քաղվածքի տրամադրման միջոցով՝ Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրով նախատեսված քաղվածքի տրամադրման պայմանների և ժամկետների համաձայն:

3.28. Հաշվի պայմանագրի լուծումը հիմք է Հաճախորդի Հաշիվը փակելու համար: Հաշվում առկա դրամական միջոցների մնացորդը տրամադրվում է Հաճախորդին կանխիկ կամ Հաճախորդի ցուցումով /հանձնարարականի հիման վրա/ փոխանցվում է այլ Հաշվի՝ Հաճախորդի համապատասխան գրավոր դիմումը ստանալուց ոչ ուշ, քան 3(երեք) օրվա ընթացքում:

3.29. Հաճախորդը իրավունք ունի ցանկացած ժամանակ փակել Հաշիվը՝ Բանկին սահմանած ձևի դիմում (այդ թվում՝ Թվային տիրույթում) ներկայացնելով:

3.30. Հաճախորդի կողմից ներկայացված պայմանագիրը/երը լուծելու և Հաշիվը փակելու վերաբերյալ դիմումը Բանկի կողմից ենթակա չէ կատարման, քանի դեռ չեն վերացել Հաշվով գործառնությունների չդադարեցման համար հիմք հանդիսացող հանգամանքները:

3.31. Հաշիվները ենթակա չեն փակման, եթե՝

1) Հաճախորդը Բանկի նկատմամբ ունի պարտավորություն, և/կամ այլ Հաշիվներով կատարվում են Հաճախորդի գործող ժամկետային ավանդային պայմանագրով ավանդի տոկոսագումարների վճարման և այլ ավանդային հաշվով գործարքներ, և/կամ

2) մնացորդ պարունակող Հաճախորդի հաշվի վրա առկա է արգելանք, և/կամ

3) Հաշիվը ծանրաբեռնված է գրավով և չկա հաշիվը փակելու վերաբերյալ գրավառուի համաձայնությունը:

4) Օրենքով նախատեսված այլ դեպքերում:

3.32. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնել բանկային հաշվի սպասարկումը և փակել հաշիվը առանց Հաճախորդի համաձայնության՝

1) եթե Հաճախորդը թույլ է տվել Կանոնների և Սակագների, ինչպես նաև Բանկի նկատմամբ ստանձնած այլ պարտավորությունների խախտում,

2) եթե հիմքեր կան ենթադրելու, որ հաշիվն օգտագործվում է որևէ անօրինական նպատակով,

3) եթե Հաճախորդի հաշվին առկա դրամական միջոցները 12 (տասներկու) հաջորդական ամիսների ընթացքում չեն բավականացնում հաշիվը սպասարկելու համար Սակագներով սահմանված վճարները գանձելու համար կամ զրոյական մնացորդով հաշվով չեն իրականացվել որևիցե գործարքներ: Սույն կետի իմաստով հաշվով գործառնություններ չեն համարվում Բանկի կողմից հաշվի սպասարկման վճարի կամ Բանկի առջև Հաճախորդի այլ պարտավորությունների դիմաց դրամական միջոցների գանձման, ինչպես նաև դատարանի վճռի հիման վրա հաշվից միջոցների բռնագանձման դեպքերը:

3.33. Հաշվի ապօրինի օգտագործման դեպքերում անհրաժեշտ է տեղեկացնել Բանկին՝ զանգահարելով (+37410) 510 000 շուրջօրյա հեռախոսահամարով, կամ դիմելով Բանկին՝ Բանկում գործող և պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված կապի այլ միջոցներով: Ապօրինի օգտագործման մասին տեղեկացնելու դեպքում հաշիվը կարգելափակվի և Բանկը Հաճախորդի դիմումի հիման վրա կուսումնասիրի գործարքի մանրամասները և, անհրաժեշտության դեպքում, կսկսի գործարքի բողոքարկման գործընթացը:

3.34. Բանկը, մինչև Հաճախորդի կողմից Հաշվի պայմանագրի ստորագրումը վերջինիս ծանոթացնում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին և կարգին:

ԳԼՈՒԽ 4. ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

4.1. Բանկը Հաճախորդից ընդունում է դրամական միջոցներ /այսուհետ՝ Ավանդ/ ժամկետային ավանդի տեղեկատվական ամփոփագրով սահմանված արժույթներով, և պարտավորվում է Հաճախորդին վերադարձնել ավանդի գումարը և Պայմանագրով նախատեսված պայմաններով և կարգով տոկոսներ վճարել դրա դիմաց:

4.2. Հաճախորդը Բանկում կարող է ներդնել ժամկետային ավանդ տվյալ պահին Բանկում գործող ժամկետային ավանդների կոնկրետ տեսակների համար սահմանված պայմաններով և տոկոսադրույքներով: Բանկը պարտավորվում է Ավանդի գումարը վերադարձնել ֆիզիկական անձ հաճախորդի առաջին իսկ պահանջով:

*Սույն կետով սահմանված Հաճախորդի առաջին իսկ պահանջով ավանդի վերադարձի պայմանը չի տարածվում իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր հանդիսացող հաճախորդների կողմից ներդրված Ավանդի նկատմամբ: Վերջիններիս կողմից Ավանդը ժամկետից շուտ պահանջելու դեպքում վերադարձման ժամկետը սահմանվում է Պայմանագրով:

4.3. Ավանդատեսակի պայմանները (ներառյալ՝ Ավանդի ժամկետը, տարեկան տոկոսադրույքը և եկամտաբերությունը, գումարը, արժույթը, երկարաձգման և այլ հիմնական պայմանները) արտացոլվում են տվյալ ավանդատեսակի տեղեկատվական ամփոփագրում, ինչպես նաև Պայմանագրում: Ընդ որում՝ Պայմանագրում նշված տոկոսադրույքը ավանդային պայմանագրի գործողության ժամկետում ենթակա չէ փոփոխման, բացառությամբ կոնկրետ ավանդատեսակների, որոնց տոկոսադրույքների փոփոխման կարգը սահմանվում է Ամփոփագրով:

4.4. Ավանդի դիմաց տոկոսների հաշվարկման և վճարման կարգը, եղանակը նախատեսվում է համապատասխան պայմանագրում, ինչպես նաև համապատասխան Ամփոփագրում:

4.5. Ավանդին/ից կարող են թույլատրվել լրացուցիչ մուտքագրումներ և ելքագրումներ համաձայն տվյալ ավանդատեսակի Ամփոփագրի:

4.6. Բանկը կարող է սահմանել Ավանդի գումարի ներդրման, մուտքագրումների, ելքագրումների նվազագույն և առավելագույն չափ և ժամկետ յուրաքանչյուր ավանդատեսակի համար:

4.7. Բանկային հաշվի բացակայության դեպքում Ավանդի պայմանագրի կնքման հետ զուգահեռ կնքվում է նաև Բանկային հաշվի բացման և սպասարկման պայմանագիր և բացվում Բանկային հաշիվ:

4.8. Ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարը՝ պայմանագրով նախատեսված ժամկետին համապատասխան փոխանցվում է Բանկում բացված ժամկետային ավանդի պայմանագրով սահմանված Հաճախորդի բանկային հաշվին (եթե առկա չէ Հաճախորդի այլ հանձնարարական):

4.9. Ժամկետից շուտ Ավանդը վերադարձնելու դեպքում տոկոսները հաշվարկվում և վճարվում են համաձայն ավանդային պայմանագրի և պայմանագրին կից Ամփոփագրի:

4.10. Կոնկրետ ավանդատեսակի հիմնական պայմանները սահմանվում են «Ֆասթ Բանկ» ՓԲԸ «Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդի Տեղեկատվական ամփոփագրում» կամ «Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ժամկետային ավանդի Տեղեկատվական ամփոփագրում»:

4.11. Ավանդի նկատմամբ կիրառվում են նաև սույն կանոններով սահմանված հաշվի բացման և սպասարկման պայմաններն այնքանով, որքանով, որ չեն հակասում Ավանդի Ամփոփագրով սահմանված պայմաններին:

4.12. Ժամկետային ավանդի պայմանագիրը ձեռք է բերում իրավական ուժ՝ Ավանդի գումարը ավանդային հաշվին մուտքագրելու պահից:

ԳԼՈՒԽ 5. ԹՎԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ ՀԵՌԱՀԱՐ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

5.1. Բանկը Հաճախորդներին տրամադրում է Թվային տիրույթում հեռահար բանկային ծառայությունների համակարգերի միջոցով բանկային և ավանդային հաշիվներ բացելու, դրանցով գործարքներ իրականացնելու, ինչպես նաև դրանց վերաբերյալ տեղեկատվության դիտման հնարավորություն:

5.2. Թվային տիրույթում գործարքների իրականացման հասանելիություն ստանալու համար Բանկը սահմանում է Հաճախորդների պատշաճ նույնականացման և Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման պահանջներ՝ առնվազն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և ծավալով:

5.3. Բանկում հաշվի բացման նպատակով Կանոնները, Ամփոփագիր և այլ պահանջները Հաճախորդի կողմից ակցեպտավորված են համարվում էլեկտրոնային եղանակով դրանք հաստատելու՝ «Համաձայն եմ» դաշտը և/կամ «Հաստատել» կոճակը սեղմելու (ինչպես նաև տվյալ գործարքի ձևակերպման համար նախատեսված այլ հավաստումներ տալու) միջոցով:

5.4. Հաճախորդը, ակցեպտավորելով Կանոնները, հաստատում և երաշխավորում է, որ Կանոնների ակցեպտավորման պահին գործում է սթափ մտքով, առանց որևէ մոլորության և հարկադրանքի ազդեցության, լիովին հասկանում և գիտակցում է պայմանների իմաստն ու էությունը, լիովին իրավունակ ու գործունակ է, ինչպես նաև առկա չէ Պայմաններին էությունը գիտակցելուն և ընկալելուն խոչընդոտող հանգամանքներ (հիվանդություն, թմրանյութերի, այլ հոգեմետ նյութերի կամ ալկոհոլի ազդեցություն և այլն), ինչպես նաև հաստատում է, որ իր մոտ բացակայում է Պայմաններն ակցեպտավորելու հարկադրող պարտականություններ, այն ակցեպտավորում է կամովի, իր կամքի ազատ արտահայտությամբ՝ լիովին հասկանալով և ընդունելով Պայմանների/Կանոնների իմաստն ու նշանակությունը և դրանից բխող բոլոր փաստացի և իրավական հետևանքները:

5.5. Յուրաքանչյուր անգամ Բանկի ծառայություններից օգտվելու նպատակով Թվային տիրույթի համակարգում Հաճախորդի կողմից մուտք գործելուց առաջ սահմանված է հավաստագրման պահանջ, որը ենթադրում է Հաճախորդի կողմից իր օգտանվան և գաղտնաբառի, ինչպես նաև PIN կոդի մուտքագրում և ավտոմատ էլեկտրոնային համակարգի միջոցով օգտանվան և գաղտնաբառի նույնականացում: Հաճախորդի մուտքն իրականացվում է կենսաչափական նույնականացմամբ (մատնահետքի կամ դեմքի սքանավորմամբ) այն դեպքում, երբ Հաճախորդն ակտիվացրել է կենսաչափական նույնականացումը:

5.6. Հաճախորդը Թվային տիրույթում համակարգ մուտք գործելու համար նախատեսված գաղտնաբառը և/կամ գործարքի կատարման համար նախատեսվող հաղորդագրության միջոցով ուղարկվող մեկանգամյա կոդը և/կամ Համակարգեր մուտք գործելու հնարավորությունը երրորդ անձանց համար որևէ ձևով հասանելի չպիտի դարձնի և դրանք երրորդ անձանց Հաճախորդի կողմից հասանելի դարձնելու (ներառյալ՝ մուտք գործելու համար նախատեսված գաղտնաբառը և/կամ PIN կոդը, և/կամ մեկանգամյա կոդը երրորդ անձանց հասանելի հարցում բավարար հոգատարություն չցուցաբերելու) դեպքերում Բանկը պատասխանատվություն չի կրում Համակարգով կատարված գործարքների համար:

5.7. Բանկը կարող է սահմանել Համակարգի օգտագործման առանձին ժամեր, կասեցնել Համակարգի մատչելիությունը, ինչպես նաև սահմանել Համակարգ մուտք գործելու և գործառնություններ իրականացնելու անվտանգությունը բարձրացնող լրացուցիչ պահանջներ և ընթացակարգեր:

5.8. Թվային տիրույթում գործարքները կատարված են համարվում Համակարգում գործարքի կնքմանն ուղղված համապատասխան հրահանգների/քայլերի հերթականության կատարմամբ:

5.9. Հեռահար համակարգի միջոցով հաճախորդ կարող են դառնալ միայն ՀՀ ռեզիդենտ և ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձիք:

ԳԼՈՒԽ 6. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

6.1.Բանկի և Հաճախորդի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Հաճախորդն իրավունք ունի Բանկի և իր միջև կնքված պայմանագրից/երից բխող գույքային բնույթ կրող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին, եթե Հաճախորդի պահանջը չի գերազանցում տասը միլիոն ՀՀ դրամը կամ արտարժույթով համարժեք գումարը:

6.3. Նախքան ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելը Հաճախորդը պարտավոր է իր պահանջը գրավոր ներկայացնել Բանկին՝ նշելով, թե որն է Բանկի խախտումը՝ ներկայացնելով խախտման փաստի հիմնավորումները:

6.4. Սույնով տեղեկացվում է, որ Բանկը կնքել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր այն պահանջներով, որոնց ընդհանուր չափը չի գերազանցում 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

6.5. Պայմանագրին կից տրամադրվում է «Ի՞նչ անել, եթե բողոք ունեք» ձևաթուղթը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 225-Ն որոշմամբ հաստատված «Հաճախորդների բողոքների քննության գործընթացը կարգավորող ներքին իրավական ակտերին ներկայացվող նվազագույն պայմաններ և սկզբունքներ կանոնակարգ 8/04-ի Հավելված 3-ի: